

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


Տնտեսական աճի տեմպը շարունակում է պահպանվել բավական բարձր մակարդակում՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով դեպի ՀՀ կապիտալի և մարդկանց ներհոսքի մեծ ծավալներով: 2022թ. նոյեմբեր ամսին, սակայն, տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) որոշակիորեն դանդաղել է, ինչը պայմանավորված է նախորդ տարվա նույն ամսվա բարձր բազայի (նախորդ տարվա նոյեմբերին ՏԱՑ-ի կտրուկ աճի) էֆեկտով: Այսպես, նոյեմբերին ՏԱՑ-ը կազմել է 13.8%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 3.7 տոկոսային կետով: Այդ պայմաններում, կուտակային ՏԱՑ-ը մայիսից հետո առաջին անգամ դանդաղել է՝ 14.5%-ից դառնալով 14.4%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 6.1 և 5.8 տոկոսային կետ: Արդյունաբերության և շինարարության ճյուղերն ավելի փոքր նպաստում են ունեցել՝ համապատասխանաբար 2.2 և 0.7 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-նոյեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում գրանցվել է անկում, ինչը ևս որոշակիորեն պայմանավորված է բազայի էֆեկտով: Նոյեմբերին արդյունաբերության ճյուղի տնտեսական ակտիվությունը նվազել է 2.3%-ով, որը մասամբ պայմանավորված է բազայի էֆեկտով: Մասնավորապես, նախորդ տարվա նոյեմբերին արդյունաբերության աճի տեմպը կտրուկ արագացել էր (շուրջ 11.8 տոկոսային կետով), որի համեմատ էլ ընթացիկ տարվա նոյեմբերին գրանցվել է անկում: Այս պայմաններում էապես դանդաղել է նաև կուտակային աճի տեմպը՝ հունվար-նոյեմբերին կազմելով 8.4%՝ դանդաղելով 1.5 տոկոսային կետով: Արդյունաբերության անկման պատճառները առավել մանրամասն հնարավոր

կլինի վերլուծել սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկագրի հրապարակումից հետո:

2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով¹ արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 18.1% աճով (նախորդ ամսվա համեմատ դանդաղել է շուրջ 1.0 տոկոսային կետով), որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 10.9 տոկոսային կետ: Այստեղ աճին առավելապես (շուրջ 4.9 տոկոսային կետով) նպաստել են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» (նպաստումը՝ 4.9 տոկոսային կետ) և «սննդամթերքի արտադրություն» (նպաստումը՝ 2.7 տոկոսային կետ) ենթախմբերում ընդգրկված ապրանքների արտադրության աճերը, որոնցից առաջինի դեպքում աճը հիմնականում պայմանավորված է վերարտահանման երևույթով:


Հանքարդյունաբերության ոլորտում անկման տեմպը մեղմվել է՝ հունվար-սեպտեմբերին արձանագրված 6.4%-ից դառնալով 5.1%: Վերջինս ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.4 տոկոսային կետով: Ընդ որում, մետաղական հանքաքարի արդյունահանման անկումը կազմել է 6.4%, մինչդեռ հանքարդյունաբերության այլ ճյուղերում արձանագրվել է 36.9% աճ:

Արդյունաբերության աճին նպաստել է նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 0.3 և 0.1 տոկոսային կետով:

¹ 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է: Շինարարության աճն ընթացիկ տարվա նոյեմբերին կազմել է 11.3%՝ հոկտեմբերի համեմատ դանդաղելով 3.8 տոկոսային կետով: Կուտակային՝ հունվար-նոյեմբեր ամիսների աճի տեմպը նույնպես փոքր-ինչ դանդաղել է՝ հասնելով 13.9%-ի՝ հունվար-հոկտեմբերի 14.4%-ի համեմատ:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճը կայունացել է բավական բարձր մակարդակում: 2022թ. նոյեմբերին ծառայությունների աճը կազմել է 30.9%՝ հոկտեմբերի 34.9%-ից հետո: Հունվար-նոյեմբեր ամիսների աճը շարունակել է արագանալ՝ հասնելով 28.2%-ի:

2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով² ծառայությունների աճն առավելապես պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 12.5, 6.6 և 4.3 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի ոլորտի աճը նույնպես պահպանվում է բավական բարձր մակարդակում: Ինչպես ծառայությունների դեպքում, առևտրի աճը նույնպես որոշակի դանդաղել է հոկտեմբերի համեմատ, սակայն գտնվել է բավական բարձր մակարդակում՝ կազմելով 22.1%: Հունվար-նոյեմբեր ամիսների աճը կազմել է 16.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով:

² 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ³, %



Ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է: Չնայած աճի տեմպի դանդաղման չափը բավական մեծ է՝ շուրջ 42.1 տոկոսային կետ, արտահանման աճը դեռևս մնում է էապես բարձր՝ 95.8%, ինչի արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների արտահանման ծավալի աճը հասել է 75.2%-ի՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.6 տոկոսային կետով:


2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման շուրջ 3.1 անգամ աճով, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 22.0 տոկոսային կետ: Արտահանման աճին էական նպաստում է ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 11 անգամ աճը, որը 18.9 տոկոսային կետ նպաստում է ունեցել արտահանման աճին: Այս երկու ապրանքախմբերի բարձր աճերը, ինչպես նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 4.3 անգամ աճը (նպաստումը՝ 4.8 տոկոսային կետ) պայմանավորված են վերարտահանմամբ: Նշանակալի են եղել նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի

³ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արտահանման աճի ցուցանիշը վատթարացել է 0.1 տոկոսային կետով, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշը՝ բարելավվել է 1.4 տոկոսային կետով:

⁴ 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 9.0 և 3.7 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁵, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ մնալով բավական բարձր մակարդակում: 2022թ. նոյեմբերին ներմուծման ծավալը նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճել է 63.9%-ով, որը թեև բավական բարձր ցուցանիշ է, սակայն նախորդ ամսվա համեմատ ցածր է 12.0 տոկոսային կետով: Այդ պայմաններում հունվար-նոյեմբեր ամիսների ներմուծման աճի ցուցանիշը մնացել է նախորդ ամսվա մակարդակում՝ կազմելով 63.6%:

Ներմուծման աճին ամենամեծ չափով նպաստում են ունեցել (հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով⁶) «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 15.0% և 9.0%: Հենց այս ապրանքախմբերը բավական մեծ չափով նպաստում են նաև արտահանման աճին, ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ արտաքին առևտրի մեծ աճերը հանդիսանում են վերարտահանման հետևանք: Նշանակալի են նաև «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 7.7 և 5.4 տոկոսային կետ նպաստում: Մյուս

⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-մարտ ամիսների ներմուծման աճի ցուցանիշը վատթարացել է 0.5 տոկոսային կետով, հունվար-ապրիլ և հունվար-մայիս ամիսների ցուցանիշները՝ 0.3-ական տոկոսային կետով, հունվար-հունիս, հունվար-հուլիս և հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշները՝ 0.2-ական տոկոսային կետով, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշը բարելավվել է 0.1 տոկոսային կետով:

⁶ 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


ապրանքախմբերի ներմուծման ծավալները նույնպես աճել են և ընդհանուր ներմուծման աճին ունեցել են դրական նպաստում:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2022թ. հունվար-հոկտեմբերին անվանական աշխատավարձի աճի տեմպն արագացել է⁷, սակայն բարձր գնաճի պայմաններում իրական աշխատավարձի աճը բավական ցածր է եղել: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 14.0%-ով՝ կազմելով 226,621 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.2%-ով և կազմել 179,870 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 17.0%-ով՝ կազմելով 247,063 դրամ:

Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-հոկտեմբերին սպառողական գների միջին մակարդակն աճել է 8.7%-ով, ինչի պայմաններում իրական աշխատավարձն աճել է 4.9%-ով, իսկ պետական հատվածում՝ նվազել է շուրջ 4.1%-ով: Ընդ որում, պետական հատվածում են ներառվում նաև ուսուցիչները և պետական հաստատություններում աշխատող բժիշկները, ինչը նման պատկերն ավելի մտահոգիչ է դարձնում:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-հոկտեմբերին, %



⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, նոյեմբերի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)




ՀՀ դրամը շարունակում է էականորեն արժևորված մնալ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-նոյեմբերին արժևորվել է շուրջ 15.0%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 29.3%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը վերջին ամիսներին դանդաղել է՝ կապված ՌԴ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-նոյեմբերին կազմել է 5.1%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁸

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը սեպտեմբերից սկսած դանդաղում է՝ պայմանավորված հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղմամբ: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-նոյեմբերին աճել են 22.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով շուրջ 0.1 տոկոսային կետով: Հարկային եկամուտների աճը կազմել է 21.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.5 տոկոսային կետով: Հարկերի աճի տեմպի դանդաղումը պայմանավորված է մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի գործողության դադարեցմամբ: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսներին աճել են 50.2%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 41.3%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 20.6%), շահութահարկի (աճը՝ 44.5%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 1.8 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 7.2, 4.4 և 3.2 տոկոսային կետ: Ինչպես նշվեց, հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մետաղական հանքանյութերի արտահանման տուրքը

⁸ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:
Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:


սեպտեմբերից հանվել է, հետևաբար դրա աճի տեմպը, ինչպես նաև նպաստումն ընդհանուր հարկային եկամուտներին աստիճանաբար նվազում է:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար-նոյեմբեր		2022թ. հունվար-նոյեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	13.4	13.4	21.4	21.4
ԱԱՀ	17.1	5.8	20.6	7.2
Շահութահարկ	6.7	0.7	44.5	4.4
Եկամտային հարկ	2.6	0.8	9.9	2.7
Ակցիզային հարկ	-10.7	-1.0	11.1	0.8
Շրջանառության հարկ	21.4	0.5	26.1	0.6
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	18.0	0.6	60.3	2.2
Մաքսատուրք	27.1	1.3	-33.6	-1.8
Սոցիալական վճար	75.7	1.4	48.4	1.3
Այլ հարկային եկամուտներ	84.7	1.5	18.8	0.6
Պետական տուրք	89.0	2.1	82.5	3.2

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը, ի հակադրություն եկամուտների, սկսել է աստիճանաբար արագանալ: 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 12.0%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 4.1 տոկոսային կետով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը կազմել է 4.5%, իսկ կապիտալ ծախսերն աճել են 85.8%-ով՝ կազմելով 295.4 մլրդ դրամ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Հունվար-նոյեմբերի արդյունքներով պետական բյուջեն եղել է պակասուրդային: ՀՀ պետական բյուջեի ծախսերը գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով ձևավորվել է բյուջեի պակասուրդ՝ շուրջ 86.3 մլրդ դրամի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր շուրջ 222.4 մլրդ դրամ պակասուրդ:


5.4. Պետական պարտք

2022թ. նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը գերազանցել է 10 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը և կազմել 10,264.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ աճելով 12.1%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես արագ տեմպով աճել է՝ կազմելով 9,699.2 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 11.6%-ով: Դրամային արտահայտությամբ, սակայն, և՛ պետական պարտքը, և՛ կառավարության պարտքը նվազել են՝ համապատասխանաբար 8.9% և 9.3%, ինչը հիմնականում պայմանավորված է փոխարժեքի արժևորմամբ:

Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի շուրջ 61.5% աճով (դրամային արտահայտությամբ ներքին պարտքն աճել է 31.3%-ով), իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 8.7%-ով: Տարեսկզբի համեմատ կառավարության պարտքն աճել է 10.6%-ով կամ 931.3 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ներքին պարտքի աճով:

Նոյեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճը շարունակվել է: Մասնավորապես, կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) նախորդ ամսվա համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 2.8 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ չի փոխվել, սակայն նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 1.8 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպն աստիճանաբար դանդաղում է: Վերջին ամիսներին գնաճի տեմպը սկսել է դանդաղել՝ նույնիսկ նվազելով 8.8%-ի, ինչը նախորդ ամսվա համեմատ ցածր է 0.7 տոկոսային կետով: Դեկտեմբերին, գնաճի դանդաղման պայմաններում, ՀՀ ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.25 տոկոսային կետով՝ հասցնելով այն 10.75%, ինչն ըստ ԿԲ-ի՝ համահունչ է գործընկեր երկրներում (հիմնականում՝ զարգացած երկրներում) վարվող դրամավարկային պայմանների խստացման քաղաքականությանը:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. նոյեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների զգալի բարձր աճի տեմպն ավելի է արագացել: 2022թ. նոյեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 25.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.6 տոկոսային կետով: Ավանդների աճի նման կտրուկ արագացումը պայմանավորված է ոչ ռեզիդենտների ավանդների 56.4 տոկոս աճով: Ընդ որում, աճը հիմնականում պայմանավորված է եղել արտարժույթային ավանդների շուրջ 1.2 մլրդ դրվարով աճով, իսկ ոչ ռեզիդենտների դրամային ավանդները նվազել են:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 12.8 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները: Ռեզիդենտների շարքում աճել է ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը՝ հասնելով 39.2%-ի, որն ընդհանուր ավանդների աճին ունեցել է 7.7 տոկոսային կետ նպաստում (նախորդ ամսվա 5.5-ի դիմաց), իսկ տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճն ընդհանուր ավանդների աճին նպաստել է 4.7 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


2022թ. նոյեմբերին վարկերի աճը շարունակել է արագանալ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 4.9%-ով՝ արագանալով 0.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Կտրուկ արագացել է ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը՝ հասնելով 9.9%-ի՝ նախորդ ամսվա 1.6%-ից, իսկ դրանց նպաստումն ընդհանուր վարկերի աճին կազմել է 0.5 տոկոսային կետ: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալներն աճել են 4.6%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են 4.4 տոկոսային կետ նպաստում:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 16.1% աճով, ինչը նախորդ ամսվա համեմատ ավելի է 3.1 տոկոսային կետով: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի ծավալը շարունակում է նվազել:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների⁹ շարքում վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիփոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 31.6%, իսկ նպաստման չափը՝ 5.2 տոկոսային կետ: Գյուղատնտեսության և շինարարության ոլորտներին տրամադրվող վարկերը նույնպես աճել են, և դրանց նպաստումը ընդհանուր վարկերի աճին կազմել է համապատասխանաբար 0.7 և 0.4 տոկոսային կետ: Սպառողական վարկերը, երկար ժամանակ նվազելուց հետո, սկսել են արագ աճել՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով 1.7 տոկոսային կետով:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի մեծ ծավալները պահպանվում և ավելի են արագանում: 2022թ. հոկտեմբերին, բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 326.9 մլն ԱՄՆ դոլար (նախորդ ամսվա 309-ի դիմաց)՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով շուրջ 4.5 անգամ: Տարեսկզբից մինչև հոկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում դրամական փոխանցումների զուտ ներհոսքը գերազանցել է 2 մլրդ ԱՄՆ դոլարը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 2.7 անգամ ավելի:

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:
2022թ. նոյեմբերի ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական աճի տեմպը շարունակում է մնալ բավական բարձր մակարդակում, սակայն արդյունաբերության ոլորտում գրանցվել են բացասական զարգացումներ, ինչը ցույց է տալիս, որ անկայունության ռիսկերը պահպանվում են: Նոյեմբերին գրանցվել է ՏԱՑ-ի որոշակի դանդաղում՝ պայմանավորված նախորդ տարվա բարձր առկայությամբ (բազայի էֆեկտով), սակայն կուտակային ՏԱՑ-ը մնացել է բավական բարձր մակարդակում՝ հունվար-նոյեմբերին կազմելով 14.4%: Միևնույն ժամանակ, արդյունաբերության ոլորտում գրանցվել է անկում, ինչը մտահոգիչ է, քանի որ բարձր տնտեսական աճը հիմնականում գրանցվում է ծառայությունների և առևտրի աճերի հաշվին, որոնք կայուն չեն, և շուկերի չեզոքացման պարագայում (ՌԴ քաղաքացիների արտահոսքի դեպքում) կարող են կտրուկ անկում ապրել՝ տնտեսությանը թողնելով արդեն իսկ «թուլացած» ներուժով և նույնպիսի արտահանելի հատվածով:

2. Ֆինանսական համակարգի զարգացումները նույնպես մտահոգության առիթ են ստեղծում: Բանկային համակարգում կտրուկ աճել են ոչ ռեզիդենտների արտարժույթային ավանդները, մինչդեռ արտարժույթային վարկերը նվազել են: Փոխարենը, բանկերը ներգրավված արտարժույթային ավանդների դիմաց տրամադրում են դրամային վարկեր: Հետագայում դրամի արժեզրկման պարագայում, բանկերի պորտֆելում կտրուկ կաճի ավանդների ծավալը և կնվազի վարկերի ծավալը՝ հանգեցնելով ֆինանսական կայունության հետ կապված խնդիրների: Մյուս կողմից՝ էականորեն աճում են ձեռնարկությունների ավանդները բանկերում, և նվազում է բանկերի կողմից ձեռնարկություններին տրամադրված վարկերի ծավալը, ինչը կարող է խոսել ներդրումային ակտիվության նվազման մասին: Վերջինս ևս բացասական գործոն է տնտեսության ներուժի և երկարաժամկետ կայունության տեսանկյունից:

3. Բարձր տնտեսական աճի պայմաններում իրական աշխատավարձի մակարդակը աճում է բավական համեստ տեմպով, իսկ պետական հատվածում՝ նույնիսկ նվազում է: Հունվար-հոկտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում աճել է 14.0%-ով, 4.2%-ով՝ պետական հատվածում և 17.0%-ով՝ ոչ պետական հատվածում: Նույն ժամանակահատվածում, սպառողական գների միջին մակարդակն աճել է 8.7%-ով, ինչը նշանակում է, որ անվանականից իրականի վերածելու դեպքում ընդհանուր տնտեսությունում աշխատավարձի իրական աճը կկազմի 4.9%, իսկ պետական հատվածում՝ կնվազի 4.1%-ով: Ստացվում է, որ այս ժամանակահատվածի իրական ՏԱՑ-ի պայմաններում իրական աշխատավարձերը աճել են շուրջ 3 անգամ ցածր տեմպով, իսկ պետական հատվածում, որտեղ ներառված են նաև ուսուցիչները և պետական հաստատություններում աշխատող բժիշկները, իրական

աշխատավարձը նվազել է նախորդ տարվա համեմատ: Այս վիճակագրությունը խոսում է այն մասին, որ ընթացիկ տարվա տնտեսական աճը ներառական չէ և մեծացնում է անհավասարությունը, քանի որ, եթե աճը չի ուղղվում աշխատավարձերի բարձրացմանը, ապա ուղղվում է շահույթների մեծացմանը: Իսկ շահույթ ստանում են առավելապես հարուստ խավի ներկայացուցիչները:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: